ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 3-ին, կիրակի.- Ե կիրակի զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Զարեհ արեղա Կարապյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը՝ «Արդ եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» բնաբանով /Մատթ. Ե 48):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Օգոստոսի 10-ին, կիրակի.- Զ կիրակի զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ արեղա Մնացականյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ «Ու տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն. Որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո» բնաբանով (Մարկ. Բ 5):

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Օգոստոսի 17-ին, կիրակի.- Վերափոխումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Սրբազանը՝ «Դու ծաղիկ անթառամ տոհմի սեռիս մարդկութեան. եւ շառաւիղ օրհնութեան՝ նախնւոյ ծնողին մեր բնութեան. բարեխօսեա Միածնին՝ Աստուածածին մայր Բանին» բնաբանով (Շարական *Վերափոխման*):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո կատարվեց *խաղողի օրհնության կարգ*:

Օգոստոսի 24-ին, կիրակի.- Բ կիրակի զկնի Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը՝ «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէս եւ քարկոծ

առնէիր զառաքեալսն առ քեզ. քանի՞ցս անգամ կամեցայ ժողովել զորդիս քո. որպէս հաւ զծագս իւր ընդ թեւովք. եւ ոչ կամեցարուք» բնաբանով (Ղուկ. ԺԳ 34):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Օգոստոսի 31-ին, կիրակի: - Տօն գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կիլիկիո Կաթողիկոսության Կիրակնօրյա դպրոցների վարիչ-տնօրեն Տ. Սեպուհ եպս. Սարգիսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Սրբազան Հայրը՝ «Եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա, բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն» բնաբանով (Մարկ. Դ 34):

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Սեպտեմբերի 7-ին, կիրակի: - Դ կիրակի զկնի Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Իսի-Լե-Մուլինո (Ֆրանսիա) քաղաքի հոգևոր հովիվ Տ. Սյուռոն վրդ. Գրվրգյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը: Վեհափառը հավատացյալներին ներկայացրեց Հարավային Ռուսաստան կատարած իր հովվապետական այցելության տպավորությունները:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Սեպտեմբերի 14-ին, կիրակի: - ԽԱՉՎԵՐԱՑ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ՝ մինչև զորդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի՝ կորիցի. այլ ընկալցի զկեանս յաւիտենականս» բնաբանով (Հովհ. Գ 16):

Երեկոյան ժամերգությունից առաջ, ռեհանները զարդարելով Ս. Խաչը, Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի նախագահությամբ կատարվեց Անդաստան, որից հետո Ս. Խաչը դուրս հանվեց Տաճարի քակ և «Խաչի Քո Քրիստոս երկրպագեմք» շարականի երգեցողությամբ, հանդիսավոր թափոր կազմած, Ս. Խաչը պտտեցրին Մայր Տաճարի շուրջը:

Սեպտեմբերի 15-ին, երկուշաբթի: - Ծիշատակ մեռելոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Ֆրանկյանը:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ՝ *վասն համօրէն ննջեցելոց:*

Սեպտեմբերի 18-ին, հինգշաբթի: - Տօն է Եկեղեցւոյ:

Այսօր, երեկոյան, Գևորգյան ճեմարանի վերանորոգված շենքում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, կատարվեց Գևորգյան Հոգևոր ճեմարանի բացման հանդիսավոր արարողությունը: Հանդիսությանը ներկա էին Կ. Պոլսո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպս. Գազանճյանը, ՀՀ նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, պաշտոնատար այլ անձինք (տե՛ս էջ 41-47):

Սեպտեմբերի 21-ին, կիրակի: - Բ կիրակի զկնի Ս. Խաչի: Բարեկենդան Վարագայ Սրբոյ Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևմտյան թեմի Հայոց Առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգեն արքեպիս. Հովսեփյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տե՛ս էջ 33-37): Այնուհետև Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց *Հանրապետական Մաղթանք-Աղոթք* Հայաստանի Հանրապետության անկախության վեցերորդ տարեդարձի առթիվ:

Սեպտեմբերի 28-ին, կիրակի.- Գ կիրակի զկնի Սրբոյ Խաչի: Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գերաշնորհ Տ. Արսեն արքեպս. Պերպերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Սրբազանը՝ «Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս, եւ յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի, եւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ եւ փառօք բազմօք» բնաբանով (Մատթ. ԻԴ 30):